ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 179
վարչական տուգանք նշանակելու մասին

18 ապրիլի 2018թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Իշխան Կարապետյանս, քննելով անհատ ձեռնարկատեր Արմեն Բունիաթյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2018 թվականի փետրվարի 5-ի N 58-18 հանձնարարագրի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Արմեն Բունիաթյանի մոտ իրականացված ստուգման արդյունքում պարզվել և 2018 թվականի մարտի 16-ի թիվ 58-18 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ արձանագրվել է այն փաստը, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են **ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 25-րդ, 44-րդ, 53-րդ և 55-րդ կետերի** պահանջը. այն է՝

- հացի արտադրամասն ապահովված չէր օճառով, էլեկտրաչորացուցիչներով և (կամ) սրբիչով.
- ապահովված չէր աղբարկղերով և աղբի հավաքման համար տեղադրված չեն անջրաթափանց, կափարիչներով փակվող կուտակիչ տարողություններ.
- սննդի շղթայում ներգրավված անձնակազմը չէր պահպանում անձնական հիգիենայի կանոնները և չէր կրում համապատասխան մաքուր, անհրաժեշտության դեպքում, պաշտպանիչ հագուստ.
- սննդի շղթայում ներգրավված անձնակազմը ենթարկված չէր պարտադրի նախնական և պարբերական բժշկական զննությունների:

Այսպիսով, հաստատվել է, որ սույն վարչական գործով առաջացած իրավախախտման համար պատասխանատու է անհատ ձեռնարկատեր Արմեն Բունիաթյանը (հասցե՝ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Ս.Շահազիզի փ., տ.17): Արմեն Բունիաթյանը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցվել է, սակայն գործի քննությանը չի ներկայացել և միջնորդություն չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ, 238²-րդ, 279-րդ, 281-րդ հոդվածներով՝ 188-րդ հոդվածի 1-ին մասով՝**

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Արմեն Բունիաթյանի նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Տուգանքը վճարել թիվ 900005242822 գանձապետական հաշվին, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի** համաձայն՝ որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանքի վճարումն ապացուցող բանկային անդորրագրի պատճենը սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի իրավաբանական վարչություն:

3. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է՝ համաձայն **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի**:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով** սահմանված ժամկետում (երկու ամսվա ընթացքում):

ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

????? ??????????